ՆՈՐՋՈՒՂԱՅԱԿԱՆ
(Անաւարտ էլեգիա)

ԳՐԻՇ ԴԱՒԹԵԱՆ

Հին Իրանի անուշ մովում
Աղօտացող իմ քաղաք,
Զնգում էիր այն օրերում
Որպէս ծնծղայ ու զանգակ:

Ու հայաբառ էր քո երգը,
Որ մե՛ր երգն էր ու խօսքը,
Այգիների մեր լի բերքը,
Առատութեան հորդ հոսքը:

Գետառի պէս անսպառ էր,
Մէջքին կամուրջներդ հին,
Մեր պապերի ու նաեւ մեր
Կառուցած շէնն ու ուղին:

Տպարան ու գրադարան,
Դպրոցները կրթութեան,
Ընկերային կեանքով լեցուն
Ակումբ ու բէմ պատուական:

Սպահանի դու Եւրոպան,
Այնպէս գողտրիկ ու սիրուն,
Անդորր կեանքի մեր օթեւան
Իրանական սուրբ հողում:

* * *

Նոր Ջուղան է հայաբնակ, դարաւոր,
Սպահանի հարաւում,
Զայեանդեռուդ գետի ափից
Մինչեւ փէշերն Սոֆի սարի մթնադէմ,
Ընկողմանած, ընդարմացած մի եդէմ:

Հայաշխարհի մի ինքնատիպ գաղթօջախ,
Դարպասներով պինդ պատնէշուած.
Բայց դարի հետ դարն ապրելով,
Դարպասներն էլ խոնջ փլել են
Քսաներորդ դարի դիմաց:

Հիմա չկան դարպասները հինաւուրց.
Չկայ հայահոծ համայնքը անցեալի:
Վեր են միտուած գմբէթները պարսկառճ,
Բայց խաչակիր,
Նոր Ջուղայի տասնեւերկու ժամերի
Ու Վանքի.
Եւ հայկական զանգակատան սլացքով

Զրնգում են նրանց զանգերը ձայնեղ
Առավօտեան լուսաբացին,
Երեկոյան արեւմարի ժամերգութեամբ սրբագին։

Սոֆի սարը
Հարաւային հորիզոնն է պատուարում,
Փառակն ի վար
Շիրիմների տապաններով ծածկւած
Հանգստարանն է
Հեռացած սերունդների բիւրաւոր,
Որ Զագյարոյց Դամբարանի
Շուրջբոլորն են թափթփւած.
Հազարաւոր նաշխաքանդակ տապաններ,
Ուր պահւում են
Յիշատակներ սրբազան,
Նաեւ մի հին պատմութիւն,
Մեր պապերի,
Ու պապերի էլ նրանց.
Նոր Ջուղայի պատմութիւնը,
Սկիզբ առած Ջուղայից,
Նախիջեւանեան Ջուղայից նոյահիմն,
Եկած հասած Նոր Ջուղա,
Ու պահ դրւած
Սուրբ Ամենափրկչեան Վանաց
Աւանդատան թարեքներում զառամած։

Անհաշւելի երանգների պերճանքով է պճնւած
Սուրբ Ամենափրկիչ Վանքը,
Աւանդատան հարստութեամբ,
Հին ձեռագիր մատեաններով
Ու Մատենադարանով հին,
Թանգարանով եզական,
Միջարեւելքի առաջին
Իր անդրանիկ տպարանով հայկական։

* * *

Ես ծնւել եմ քո գրկում,
Որ Նոր Ջուղան ես եղել,
Հայաստանն ես եղել դու...
Իրանի հին, լայն գրկում...
Սպահանի հարաւային ջերմոցում
Քո սիրով ես ինձ սնել,
Զգացումներով խորին,
Գեղարւեստով, դասականութեամբ նորին...
Միս ու ոսկոր ես պարգեւել գոյութեանս,
Որ ոռոգւել է իմ արեամբ հայրենական,
Հայկական,
Որ ընդունել ես հաշտութեամբ,
Այլեւ ըմբռնողութեամբ,

Առատօրէն ջերմացրել ես
Իրանական արեւով,
Այլեւ քո թանկ շնորհներով պատւական։

Դու ես եղել զօրաւորը,
Ես եղել եմ ենթական,
Չեմ ունեցել ընտրութեան իսկ պերճանքը,
Որպէս մանուկ անճարակ,
Որ արագիլը սուրհանդակ,
Տոպրակը կախ կտուցից
Կատարել է
Ծէսն յանձնումի գերագոյն։

Արդէն գիտենք բոլորս՝
Արագիլներն են տոպրակով
Նորածիններին բերում։
Իսկ այնտեղ,
Ուր արագիլներ չկան,
Բազարից գնւած շաքարի
Տոպրակներից են հանում
Մանուկներին նորածին։
Այս վերջիններից եմ եղել ես
Երջանիկ։

Ես յիշում եմ համայնքային մեր կեանքը
Իր ներամփոփ կառոյցով,
Աւանդական սովորոյթներով հարուստ,
Պարզ, հարազատ,
Հանդիսաւոր օրերով,
Լի օրերով,
Վայելումով ընտանեկան, հանրային։

Գարունները բացւում էին
Նարգիսների ոսկեբաժակ արբունքով,
Որի ցօղով արբում էին
Մեղուները մեղրածոր։
Մախմուր վարդեր,
Մանուշակներ կապտաթեր
Բուրում էին ծաղկումների հորդումով,
Նշենիները վաղ էին հարսնանում...
Մեր մեծ բակը դղրդում էր
Պատանեկան իմ խաղերի խենթութեամբ։

Ամառները արեւաշատ շոգերով,
Քաղցր մրգերի հասունութեամբ
Պարտէզները բերքաւոր,
Այգիները բեղմնաւոր,
Հասնում էին աշնանային լի կութին։

Մեր պարտէզի կեռասենու ճիւղերից
Ճնճղակեր կեռասները
Ուտում էի ախորժով...
Հասնում էի ընկուզենու բարձրերը...

Մեր այգում
Թարմաների վրայ հեծ
Արեւաջերմ խաղող էի վայելում...

Ես յիշում եմ յունուարեան ցուրտ օրերը,
Երբ ձիւնում էր
Պատանութեան ցնծութեամբ,
Ճերմակ սաւանը ծածկում էր
Տուն ու պարտէզ ու այգի,
Մինչեւ, մինչեւ Սոֆի սարի գագաթը:

Առաւօտեան ձմեռային սեւ ագռաւների տարմը,
Կռկռոցով հաւաքւում էր չինարիների վրայ,
Ծածկում ամբողջ մերկ ճիւղերը.
Ապա ընդոստ, հաւաքական մի թիռով
Ողջ երամը թեւածում էր արեւմուտ,
Մի համօրէն կռկռոցով
Մութ ստուերով հետամուտ...
Յետոյ օրւայ երեկոյեան
Տարմը դառնում էր նորից,
Մայրամուտի ցոլքերի հետ
Ցրուելով արեւելք:
Աւանդական ու օրհնւած ընտանիքում,
Տնում, բակում ու պարտէզում եմ աճել,
Հասակ առել...

Երբեւէ չի պատահել,
Որ մոլորւեմ
Նոր Ջուղայի ծառուղիներում հողոտ,
Նեղ ու փոշոտ քուչեքում,
Քանզի դրանք գծագրւած են եղել
Իմ ծիներում...

Արդարեւ,
Ծնող երկիրն ինձ ընդունել էր միայն
Որպէս փոքրամասնութիւն:

Նժդեհական վիճարկումների բովում
Պատկանելութեան կարօտով
Երբ էլ մոլորւել եմ ես,
Թափառել եմ տարածքներում,
Մեր տնից՝ Վանք, Շիրախանի փողոցով,
Ու Նազարի պողոտայով,
Վանքից՝ Կենտրոնական Դպրոց,

Առաջլուխ, ապա Քանանեան դպրոց,
Երբեմն էլ գրադարան.
Երեկոյեան՝ Հայոց Ակումբ...
Այդ ճամփէքում,
Պտոյտներում այդ ծանօթ,
Թափել եմ
Մոլորութիւններս փշրանք առ փշրանք,
Մաքրուել եմ կասկածներից հոգեհան։

Զգացել եմ այդ երբ որ
Դառնութիւնը բերանիս
Քաղցրութեան է փոխարկուել,
Որ կեանքի համն է համով...
Պանդխտութեան դառնութիւնը
Փոխարինուել է հայկական քաղցրութեամբ,
Իրանական աշխարհում։

Եւ հայկական իմ արիւնը
Մնուել է
Իրանական արեւում։
Այդտեղից եմ զանազանել
Հայրենիքը՝
Ծննդավայրից բնիկ.
Հարազատութիւնը՝ որդեգրումից,
Պատկանելութիւնը՝ վերագրումից։
Դրանք հասարակ բաներ չեն,
Կենսական ու կարեւոր են եղել դրանք
Իմ ողջ կեանքի հաճոյքում։

Սիրել եմ քաղցրութիւնը
Զտութեամբ ու մաքրութեամբ,
Որի վճիտութիւնը
Զուլալութիւնը անոսր,
Նուիրումս են ջրդեղել
Հանց ամրութիւն անառիկ,
Խօսքիս նման անմիջական,
Մտերմութեան պէս անկաշառ,
Անանձնական համօրէն։

Անձնականը եղել են՝
Ընտանիքը սիրասուն,
Ընկերները մտերիմ,
Միութիւնները հայութեամբ ակաղձուն,
Ու երբեմն էլ ձանձրալի,
Ուր հանդիպել եմ բոլորին,
Բազմաթիւներին սիրել,
Սիրահարուել եմ մէ՛կին։
Մեր միութեան կենտրոնը
Կոչում էինք Այգեստան։

Իբր թէ գաղտնի էր այն,
Բայց ողջ համայնքը գիտէր.
Մենք էլ գիտէինք՝ գիտեն,
Եւ համարում էինք՝ իբրեւ չգիտեն։
Այդպիսին էր մեր իմացած պատշաճը,
Գաղտնիացման մի պարզունակ դրւածքով։

Ու կար նաեւ
Հայերէնի երեկոյեան դասընթաց,
Որին մասնակցում էինք
Խանդավառութեամբ անանց.
Այնպէս՝ տղայ ու աղջիկ ողջ համատեղ,
Որ նոյնը չէր դպրոցներում պետական,
Նախկին՝ հայոց,
Բայց գրաււած, պետական,
Պարսկապետական դպրոցներ,
Իսլամական օրէնքով
Տարբաժանւած ըստ սեռի։
Ամենայն օր, առաւօտեան
Կարգով շարւած,
Կանգնում էինք աղօթքի,
Պարսկերէնով, իսլամական աղօթքի,
Որպէս էինք՝ ուրբաթապահ
Հայ քրիստոնեայ խեղճ մոնթեր...

Հայերէնի երեկոյան դասընթացը
Սրտագինն էր մեր համար։
Հայկական այդ տարածքներում էին լինում,
Պատահում,
Ընկերական միջադէպեր,
Դպրոցական գորշ դասերի սերտումներ...
Փողոցային խաղերի
Գզւռտոցներ աղմկոտ,
Պարմանական պատմութիւններ սիրային.
Սիրւտոցներ հեշտալի,
Պահպանողական, սրտագին,
Զգուշութեամբ, վախւխելով,
Նոյնիսկ խեղճ...
Բայց զօրաւոր էին սէր ու նւիրում,
Ու զօրաւոր էին բախում
Մեր սրտերը սիրախում...

Իրար աչքի էինք նայում պարզութեամբ.
Զգացումը վճիտութեամբ էր հոսում
Վարք ու բարքից մեր սազական,
Պարմանական բռնկումով անբասիր,
Վստահութեամբ անբեկում։

Եւ օրերի արեւի տակ,

Գիշերների շաքում,
Սիրաբանում էինք տոհմիկ մաքրութեամբ,
Բանաստեղծականութեամբ,
Գգւանքներով կարօտագին
Ներամփոփւած համայնքում.
Երբէք գաղտնի չէին մնում
Պարմանական գաղտագողի սէրերը.
Բացւում էին գաղտնիքները
Բայց համարում էինք գաղտնի,
Պահում էիք որպէս գաղտնիք։
Դա էլ իր համը ունէր...

Ու առաջին իմ սէրը՝
Կանաչ աղջիկ մի լուսէ,
Բարձրահասակ, նրբիրան,
Փուխր շուրթերով ատլասէ,
Հասմիկների բուրմունքով,
Սեւ մազերի հոսանուտով գրգարան։

Շարմաղ աղջիկը սեթեւեթ ու գերող,
Աչքերի լուրթ անհունութեամբ,
Կոնքերի մարմար կորութեամբ,
Անուշութեամբ, քաղցրութեամբ։

Նաեւ ճերմակ աղջիկը,
Հեռից հեռու ցանկալի,
Որ երազի նման անցաւ մեղսալի։

Անցնում էինք բոլորս նոյն ճամփէքով,
Դպրոցական տարեվերջի քննութեան
Սերտումներով Նորաշէնում, մուլքերում,
Դասընթացով նոյնական,
Մարզադաշտով, ակումբով,
Հասնում էինք ընկերական հաւաքոյթի,
Հանդէսների, գգւանքների սիրային։
Հասունանում էիք մենք։

Երազները յածում էին եթերում,
Լուսադէմի քաղցր ու փախուկ երազներ,
Որ համբոյրի նման հպւում շուրթերիս,
Ու ցնդում են, ջերմը թողած շուրթերիս։

Լուսաբացի խաղարկութեամբ շողերի
Առաւօտը ծագում էր Նոր Ջուղայում,
Ճառագայթները հանց գունեղ վրձիններ
Լոյսի շերտեր էին ներկում
Վանքի ողորկ գմբէթին,
Ու պատկերում մի բարի օր
Նոր Ջուղայի ծուփ գրկում...

Մեր փողոցի բարդիները շնկում էին,
Մեր պարտէզի վարդենիները բուրում,
Եւ յանձնւում էի ես
Երիտութեան հովերին,
Որ կեանքն էր սիրելի,
Չգիտակցող, էժանագին, կարճատեւ։

Հեքիաթների մէջ բոլոր
Վստահաբար այդ հեքիաթն է սիրելի
Իմ համար, ու բոլորի։
Այդպէս էր,
Նոր Զուղան էր,
Մերն էր ու մենք էինք լոկ...
Օտար չկար բնաւին...

Բայց... պատահեց, որ մերը...
Իմը... չեղաւ...
Ու չեղաւ
Սերնդակից ընկերներից ոչ ոքի...
Ու հեռացանք... հեռացայ...
Խորթացայ ու... խորթացանք...

Դա պատահեց խոր կսկիծով,
Խոր կարօտով... խոր սիրով...
Վարք ու բարքի
Ու հաւատքի ջոկութեամբ...
Կեանքի երկաթեայ պահանջով...
Սրտամրմուռ մղկտոցով,
Նոր Զուղայի երեկոյեան թանձրութեամբ,
Երբ մայր մտնող արեւը
Մանուշագոյն էր օծում իմ խոհերը,
Մտածումներս գունեղ.
Երբ ժամերի զանգակների ղօղանջը
Թաղից թաղ էր մատուցում
Սուրբ Պատարագ,
Ինձ մօտեցնում Աստծուն...
Որ ես թէեւ թերիմացի վարանքով,
Բայց միշտ էլ
Հաւատացեալ եմ եղել։
Թէեւ սէրս ու կարօտս
Մղկտում են դեռ լռին,
Թէեւ երեկոները
Մանուշագոյն ծուէնով են երանգում
Յիշողութեան հեռուները սիրելի,
Թէեւ յուշեր են թեւ առնում
Դէպի նեղլիկ քուչեքը...
Խորթացումը իմ, սակայն,
Փոքրամասնութեան հանգոյցով

Հեռացումը իմ անդարձ,
Ընդարմութեան են հասցրել փոյթերս.
Ափսոսո՜ւմ եմ,
Բայց փոյթս չէ՛ այլեւս...
Ու կարօտում եմ միայն...
Զգացումից ծանրացող իմ խոր հեւքը
Զայնարկում է ղօղանջներ...

Ինչո՞ւ, ինչո՞ւ փոյթս չէ...
Որ պատահեց խորթացումը...

Ծննդավայր սիրելի,
Չարժանացայ որդեգրումիդ, ինչո՞ւ...
Փոքրամասնութեան խտրող գիծ
Ինչո՞ւ... ինչո՞ւ քաշեցիր...
Օրէնքներդ ինչո՞ւ եղան խիստ, խտրող...
Ինչո՞ւ չորդեգրեցիր մեզ...
Խորթացա՛յ ես...
Խորթացանք մենք...
Ամբողջ սերո՛ւնդ խորթացաւ...
Իսկապէս ողջ, հոծ սերունդնե՛ր խորթացան...

Ամբողջական իմ ցնծութեան,
Մեր մանկութեան,
Պարմանութեան,
Երիտութեան անցեալը
Անտէր մնաց,
Մնաց որբ...
Թափւած այնտեղ, մայթերում,
Փոշիացող որպէս խաշամ...
Ապագայիդ անհաղորդ...

Ինչո՞ւ... ինչո՞ւ մեր անցեալը
Քո ներկայից խորթացաւ...
Ապագայի արեւիդ մէջ
Չի ունենայ ոչ մի ցոլք...
Այլ կը մնայ լոկ մի կարօտ,
Լոկ մի յուշ ու պատմութիւն...

Է՛ր, որ էինք...
Որ էլ չենք...
Նոր Ջուղայի սրտից ելած,
Աւա՜ղ, նրանը էլ չենք...

Գլենդել, Կալիֆորնիա
2007-09-07 / 2008-02-28

(Դասական ուղղագրութեան վերածւած)